ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2019 թվականի N: 310-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N163-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 11.1-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 20-ի N 356 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Իսահակյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի հունիսի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի հունիսի 4-ի նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Իսահակյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լեյլի Ասլանյանի, Ավետիք Նազարյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտավազդ Արսենյանի, ծնողական խորհրդի· կողմից առաջադրված Արմենուհի Մինասյանի, Մելինե Աթոյանի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Կոտբաշյանի, Մարո Վարդանյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Շանթ Շաքարյանցին, Աննա Գյունաշյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտուշ Գևորգյանին, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սյուզաննա Մկրտչյանին, Մարիետա Գևորգյանին, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Մակարյանին, Դավիթ Հակոբյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 30ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Իսահակյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N163-Ա որոշման հավելվածում «Ասլանյան Լեյլի»,

«Նազարյան Ավետիք», «Արսենյան Արտավազդ», «Մինասյան Արմենուհի» «Աթոյան Մելինե», «Կոտբաշյան Արմինե», «Վարդանյան Մարո» բառերը համապատասխանաբար փոխարինել «Շաքարյանց Շանթ», «Գունաշյան Աննա», «Գևորգյան Արտուշ», «Մկրտչյան Սյուզաննա», «Գևորգյան Մարիետա», «Մակարյան Արմինե», «Հակոբյան Դավիթ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է